ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

№—Ե -03/167
«31» 07. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 27-Ա , թիվ 28-Ն,թիվ 29-Ն , թիվ 30-Ա և համայնքի ղեկավարի թիվ 44-Ա որոշումները :

Առդիր 8 էջ:

Համայնքի ղեկավար Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
,, 26" հուլիսի 2018 թվականի N27-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ՀՈՒԼԻՍԻ 2-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2018թ. հուլիսի 26-ի արտահերթ նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1.Շիրակամուտ համայնքի 2018 թվականի բյուջեի II-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին
2.Շիրակամուտ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 21-ի թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3.Շիրակամուտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Ն.Նասլյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Յայաստանի Յանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

„ 27" հուլիսի 2018 թվականի N28 -Ն

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ II-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի ղեկավարի՝ 2018 թվականի բյուջեի II-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին , ներկայացրած հաղորդումը ,Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է .

1.Ընդունել ի գիտություն Շիրակամուտ համայնքի 2018 թվականի բյուջեի II-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

| Յամայնքի ավագանու անդամներ | կողմ/5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | [signature] | | |
| Յ.Նալբանդյան | [signature] | | |
| Ա.Պապոյան | [signature] | | |
| Ն.Նասլյան | [signature] | | |
| Յ.Մազմանյան | [signature] | | |

Յամայնքի ղեկավար [signature] Ա.Երանոսյան

[stamp]

Հավելված
Շիրակամուտ համայնքի ավագանու
,,27՛՛ հուլիսի 2018թ. N 28-Ն որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

Շիրակամուտ համայնքի 2018թ.բյուջեն 1-ին կիսամյակի կտրվածքով կատարվել է ա/եկամուտների գծով 98 տոկոսով, նախատեսված 27654,3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 27131,1 հազար դրամ:

Սեփական եկամուտները,( հարկեր և տուրքեր,այլ եկամուտներ,մուտքեր հիմնական միջոցների իրացումից) նախատեսված 3989,1 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 3300,4հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 83%-ով:

Պաշտոնական դրամաշնորհների գծով (ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ) նախատեսված 21523,3հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 21523,3 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100%:

բ/ Ծախսերի գծով կատարվել է 96 %-ով նախատեսված 27654,3 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախսերը կազմել են 26487,0 հազար դրամ:

1.Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի եկամուտները 6 ամսվա համար նախատեսված 27654,3 հազար դրամի դիմաց կազմել են 27131,1 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 98%

1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով 6 ամսվա համար նախատեսված 2284,1 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1469,6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 64 %

1.2 Գույքահարկ

Գույքահարկի գծով 6 ամսվա համար նախատեսված 1236,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1629,7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 132%

1.3 Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները 6 ամսվա համար նախատեսված 375,0 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 190,8հազար դրամ կամ կատարողականը կազմել է 51 %:

1.4 Այլ եկամուտներ

Այլ եկամուտների գծով 6 ամսվա համար նախատեսված 2365,5 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2015,5հազար դրամ, 85%:
Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացումներ չեն կատարվել:
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 0 հազար դրամ:

2.Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը 6 ամսվա համար նախատեսված 27654,3 հազար դրամի դիմաց կատարվել է 26487,0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 96%:

Ըստ գործառնական դասակարգման և ծրագրերի ծախսերը կատարվել են հետևյալ կերպ՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 21,3%:
Սոցիալական պաշտպանություն 80%:

3.Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեով 6 ամսվա համար նախատեսված ծախսեր չկան

Տնտեսական հարաբերություններով մուտքագրվել է 179,3 հազար դրամ:

Շիրակամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Առաջատար մասնագետ հաշվապահ՝ Ա.Մազմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

# ՈՐՈՇՈՒՄ

,, 27 " հուլիսի 2018 թվականի N29 -Ն

## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 21-Ի ԹԻՎ33 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով՝Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Շիրակամուտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի << Շիրակամուտ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 33-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2.Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |
| Ն.Նասյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |

Համայնք ղեկավար՝ Ա.Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք,հեռ.0255-6-15-01

## ՈՐՈՇՈՒՄ
,,27’’-ը հուլիսի 2018թվականի N30 -Ա

### ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի բնակիչների դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.. Շիրակամուտ համայնքի 2018թ. բյուջեի 10.7.1 դասակարգման 4729 հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝ թվով 2 բնակչի՝ յուրաքանչյուրին 30000,0/երեսուն հազար/դրամ, համաձայն հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ/5 / | դեմ /0 / | ձեռնպահ/ 0 / |
|---|---|---|---|
| Ա.Կյուրեղյան | | | |
| Հ.Նալբանդյան | | | |
| Ա.Պապոյան | | | |
| Ն.Նասըյան | | | |
| Հ.Մազմանյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի ավագանու
2018 թվականի հուլիսի 27--ի N 30-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Պողոսյան Հմայակ Խաչիկի --երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/.

2. Պապիկյան Լենա Սեդրակի - երեսուն հազար դրամ, / սոց. օգնություն/.

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ.ԵՐԱՆՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ. 025561501

## ՈՐՈՇՈՒՄ

«12» հուլիսի 2018թվականի N 44-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ «գ» ենթակետով և 48 –րդ կետով,

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շիրակամուտ համայնքի թիվ 19 փողոցի վրա գտնվող 06-087-55-1 կադաստրային ծածկագրով 0.099 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տալ «գ. Շիրակամուտ, փողոց թիվ 19, թիվ 3» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Ա. Երանոսյան